ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<5>> ապրիլի 2011թ

№ 60-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ԱՐԱՔՍԻ ԱՓԻՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ կետի, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության 67-68-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թվականի դեկտեմբերի 3-ի << Արաքսի ափին>> փակ բաժնետիրական ընկերության լուծարման մասին N1414-Ա որոշման պահանջների և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2011թվականի մարտի 28-ի ԵՕ1/14-22/435-11գրավոր առաջարկության որոշում եմ՝

1. Հաստատել <<Արաքսի ափին>> փակ բաժնետիրական ընկերության լուծարման միջանկյալ հաշվեկշիռը 01.01.2011 թ. դրությամբ (կցվում է):
2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2011թ. ապրիլի 5
ք. Կապան